ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՈՌԱ ՍՊԸ-ն ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
43	Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Հիմնական կոնստրուկտիվ տարրերը պետք է պատրաստված լինեն փայտից կամ ԵՕդասի ՓՏՍ-ից: Նստելատեղի չափսերը՝ շուրջ 340 x 310 մմ, մինչև նստելատեղը բարձրությունը հատակից՝ համապատասխան տարիքային խմբի սեղանին: Աթոռի հենակի բարձրությունը 320 մմ: Աթոռի հենակը պետք է պատրաստված լինի 10 մմ հաստությամբ նրբատախտակից (կամ համարժեք կոնստրուկցիայով):Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և պտուտակներով, նստատեղը

	ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված, կամ անկյուններին ամրացված պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГОРА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
43	